



**«ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՅՏԵՎԱՆՔՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ և ԶԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՒՄ ԱՆՉԱՅՏ ԿՈՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ»
ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԶԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐՆ ՈՒ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. ՕՐԵՆՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

«Ռազմական գործողությունների հետևանքով ստեղծված պայմաններում և հանգամանքներում անհայտ կորած անձանց մասին» ՀՀ օրենքի նախագծում (Նախագիծ) սահմանված «անհայտ կորած անձ» հասկացությունը պարունակում է լուրջ իրավական խնդիրներ, որոնք անհրաժեշտ է վերազնեյ Նախագծի լրամշակման փուլում:

«Անհայտ կորած անձ» հասկացության սահմանումն առանցքային նշանակություն ունի անհայտ կորած անձի և նրա ընտանիքի իրավունքների պաշտպանության համակարգի ձևավորման և դրա գործունակության ապահովման համար:

Անհայտ կորած անձանց հարցերի վերաբերյալ միջազգային կառույցների կողմից մշակվել են մոդուլային օրենքներ, դրանց կիրարկման ուղեցույցներ, ինչպես նաև որոշ երկրներ ընդունել են անհայտ կորած անձանց մասին օրենքներ: Կատարվել են ուսումնասիրություններ անհայտ կորած անձանց իրավունքների պաշտպանության շուրջ, որոնք ներառում են տարբեր պետությունների փորձը: Նշված փաստաթղթերը ծառայել են հիմք ՀԶԱՎ գրասենյակի (Կազմակերպություն) կողմից առաջարկությունների մշակման և դրանց հիմնավորման համար:

Կարմիր խաչի միջազգային կոմիտեն (ԿԽՄԿ) մշակել է մոդուլային օրենք անհայտ կորած անձանց վերաբերյալ, որը նպաստում է անհայտ կորածների իրավունքների պաշտպանությանը և ընտանիքների աջակցությանը: Այդ օրենքը ներառում է հիմնական տարրեր, որոնք պետք է հաշվի առնվեն ազգային օրենսդրության մեջ:

Եթե ուսումնասիրենք Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) կողմից մշակված մոդուլային օրենքը, ապա կտեսնենք, որ ԿԽՄԿ-ն առաջարկում է ազգային իշխանություններին պահովել, որ անհայտ կորած անձի սահմանումը լինի քավականաչափ լայն՝ պաշտպանելու անհայտ կորած անձի և նրա ընտանիքի



իրավունքները, որոնք աջակցության կարիք ունեն տեղի ունեցած հանգամանքների հետևանքով¹:

Ըստ ԿԻՄԿ-ի՝ անհայտ կորած անձն այն անձն է, ում գտնվելու վայրը հայտնի չէ նրա հարազատներին և/կամ ով, հավաստի տեղեկությունների հիման վրա, ճանաչվել է կորած՝ ազգային օրենսդրության համաձայն, միջազգային կամ ոչ միջազգային զինված հակամարտության, ներքին բռնության կամ անկարգությունների, բնական աղետների կամ ցանկացած այլ իրավիճակի կապակցությամբ, որը կարող է պահանջել երկրի պետական համապատասխան մարմնի միջամտություն²:

«Անհայտ կորածների մասին» ԱՊՀ մոդուլային օրենքը սահմանում է, որ անհայտ կորած անձը՝ այն անձն է, ում գտնվելու վայրը հայտնի չէ նրա հարազատներին և/կամ ով հավաստի տեղեկատվության հիման վրա և ազգային օրենսդրության (օրենսդրության) համաձայն՝ անհայտ կորած է ճանաչվել միջազգային կամ ոչ միջազգային զինված հակամարտության, երկրում բռնության կամ հակամարտության իրավիճակի պայմաններում³:

Բոսնիա և Հերցեգովինայի «Անհայտ կորած անձանց մասին» օրենքը համարվում է լավ պրակտիկայի օրինակ, չնայած դրա որոշ դրույթների իրականացման հետ կապված խնդիրներին⁴:

«Անհայտ կորած անձանց մասին» Բոսնիա և Հերցեգովինայի օրենքի համաձայն՝ անհայտ կորած անձն այն անձն է, ում մասին նրա ընտանիքը տեղեկություն չունի և/կամ, ով հավաստի տեղեկությունների հիման վրա ճանաչվում է անհայտ կորած նախկին Հարավսլավիայի Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետության տարածքում տեղի ունեցած զինված հակամարտության հետևանքով:

«Անհայտ կորած անձ» հասկացությունը պետք է համապատասխանի նաև իրավական որոշակիության սկզբունքի պահանջներին: Իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենքում օգտագործվող հասկացությունները պետք է

¹ St´ u International Committee of the Red Cross. 2009. Guiding Principles / Model Law on the Missing: Principles for Legislating the Situation of Persons Missing as a Result of Armed Conflict or Internal Violence (<https://www.icrc.org/en/download/file/1066/model-law-missing-icrc-eng-pdf>), Էջ 8:

² St´ u International Committee of the Red Cross. 2009. Guiding Principles / Model Law on the Missing: Principles for Legislating the Situation of Persons Missing as a Result of Armed Conflict or Internal Violence (<https://www.icrc.org/en/download/file/1066/model-law-missing-icrc-eng-pdf>), Էջ 7:

³ St´ u Постановление Межпарламентской Ассамблеи государств - участников Содружества Независимых Государств от 25.11.2008 № 31-17 «О модельном законе "О лицах, пропавших без вести"» (<http://www.parliament.am/library/modelayin%20orenqner/85.pdf>) հոդված 2:

⁴ St´ u Council of Europe: Commissioner for Human Rights, Missing persons and victims of enforced disappearance in Europe, March 2016, Էջ 52:



լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության (02.12.2014թ. ՍԴՈ-1176):

Այսպիսով, հիմք ընդունելով անհայտ կորած անձի հասկացության վերաբերյալ վերոհիշյալ նկատառումները և իրավական որոշակիության սկզբունքը, արձանագրում ենք, որ **սահմանումը պետք է լինի որոշակի, բավականաչափ ընդգրկուն և համահունչ անհայտ կորած անձանց հարցերի վերաբերյալ ձևավորված միջազգային մոտեցումներին:**

Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանվում է «անհայտ կորած անձ» հասկացությունը: Նախագծի համաձայն՝ «անհայտ կորած անձ» հասկացությունը տարածվում է զինծառայողների, ինչպես նաև՝ զինվորական ծառայության մեջ չգտնվող այլ անձի, այդ թվում՝ մարտական գործողություններին մասնակցելու նպատակով կամավորագրված և մարտական գործողությունների շրջան մեկնած կամավորականի վրա, որն անհետացել է ռազմական գործողությունների հետևանքով ստեղծված պայմաններում և հանգամանքներում՝ հակառակորդի նախահարձակ գործողությունների հետևանքով, կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու, կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ, կամ հայտարարված զինադադարի ընթացքում կամ ռազմական գործողություններին հաջորդող եռամսյա ժամկետում խաղաղ պայմաններում, և նրա վերաբերյալ վերջին տեղեկությունների ստացման օրվանից ծառայության կամ նրա մշտական բնակության վայրում տեղեկություններ չկան նրա գտնվելու վայրի և ճակատագրի մասին:

«Անհայտ կորած անձ» հասկացության սահմանման մեջ որպես պայման, ի թիվս այլևի, նախատեսված են այն դեպքերը, երբ անձն անհետացել է (...) ռազմական գործողություններին հաջորդող եռամսյա ժամկետում խաղաղ պայմաններում, և նրա վերաբերյալ վերջին տեղեկությունների ստացման օրվանից ծառայության կամ նրա մշտական բնակության վայրում տեղեկություններ չկան նրա գտնվելու վայրի և ճակատագրի մասին: **Գտնում ենք, որ ռազմական գործողություններին հաջորդող եռամսյա ժամկետի սահմանումը հիմնավորված չի և արհեստականորեն սահմանափակում է «անհայտ կորած անձ» հասկացության կիրառման շրջանակը, քանի որ հասկացության հիմնական բաղադրիչներն են հանդիսանում՝ անհայտ կորած ճանաչված անձի ճակատագրի վերաբերյալ անորոշությունը և անհետացման պայմաններն ու հանգամանքները:**



Նշենք նաև, որ մշտական բնակության վայրում անձի գտնվելու վայրի և ճակատագրի մասին տեղեկությունների բացակայությունը կարիք ունի հստակեցման՝ մշտական բնակության վայրի առումով: Հնարավոր են դեպքեր, երբ անձի մշտական բնակության վայրը տարբերվում է անհայտ կորած անձի հարազատների (ազգականների) բնակության վայրից կամ ռազմական գործողությունների հետևանքով անձի մշտական բնակության վայրը փոփոխվում է, բացի այդ, այստեղ կարևոր է անհայտ կորած անձի ճակատագրի վերաբերյալ տեղեկությունների բացակայությունը հարազատների շրջանում, այլ ոչ թե անձի մշտական բնակության վայրը:

Եթե վերադառնանք 2009 թվականի «Անհայտ կորածի մասին» ՀՀ օրենքի նախագծին, ապա այն բավական լայն սահմանում է անհայտ կորած անձի հասկացությունը, ամրագրելով, որ անհայտ կորած է համարվում այն գինձառայողը, կամ այն քաղաքացին, որն անհետացել է ռազմական գործողությունների կապակցությամբ, այդ թվում գինադարարի ընթացքում կամ ռազմական գործողություններից հետո խաղաղ պայմաններում, և նրա անհետացման օրից ծառայության, ինչպես նաև նրա մշտական բնակության վայրում մինչև վեց ամիս տեղեկություններ չկան նրա գտնվելու վայրի եւ ճակատագրի մասին⁵:

Չնայած նրան, որ 2009 թվականի «Անհայտ կորածի մասին» ՀՀ օրենքի նախագիծը տալիս է համապարփակ և ընդարձակ սահմանում անհայտ կորած անձի հասկացությանը, այնուամենայնիվ, սահմանված 6-ամսյա ժամկետը՝ անհայտ կորածի կարգավիճակ տարամղելու համար, չափազանց երկար է և չի բխում անհայտ կորած անձի և նրա ընտանիքի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունից:

Կազմակերպությունը գտնում է, որ անձը պետք է ճանաչվի անհայտ կորած և ստանա համապատասխան կարգավիճակ այն դեպքում, երբ նրա գտնվելու վայրի և ճակատագրի վերաբերյալ որևէ տեղեկություն չկա՝ անհետացման պահից 72 ժամ անց:

Այսպիսով, տուժողների իրավունքների պաշտպանության և իրավակիրառ մարմինների կողմից կամայականությունների կանխարգելման նկատառումներից ելնելով, օրենսդիրը պետք է առավել հստակ և ընդգրկուն սահմանի «անհայտ կորած անձ» հասկացության սուբյեկտային կազմը և անհայտ կորած անձի իրավական կարգավիճակի ձեռքբերման պայմանները:

Ելնելով ներկայացված դիտարկումներից՝ առաջարկում ենք **«անհայտ կորած անձ» հասկացությունը** սահմանել հետևյալ բովանդակությամբ՝ **գինձառայող, ինչպես**

⁵ <https://www.gov.am/files/meetings/2009/2209.pdf>



Նաև՝ զինվորական ծառայության մեջ չգտնվող այլ անձ, որն անհետացել է ռազմական գործողությունների հետևանքով ստեղծված պայմաններում և հանգամանքներում, այդ թվում՝ հակառակորդի նախահարձակ գործողությունների հետևանքով, կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու, կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ, կամ զինադադարի ընթացքում կամ ռազմական գործողություններին հաջորդող խաղաղ պայմաններում, և նրա գտնվելու վայրը և ճակատագիրը հայտնի չէ ծառայության վայրում կամ նրա ազգականներին՝ անհետացման պահից 72 ժամ անց:

Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանվում է «շահառու» հասկացությունը, որում նշվում է, որ «(...)Նշված շահառուների բացակայության դեպքում շահառու է համարվում նաև այլ անձը, եթե դատական կարգով հաստատվել է, որ անձի՝ դատական կարգով անհայտ բացակայող ճանաչվելու օրվա դրությամբ այդ անձը եղել է այդ անձի խնամքի տակ և ունեցել է հաշմանդամություն կամ աշխատանքային կենսաթոշակի իրավունք, կամ այդ անձը խնամել է անհայտ կորած անձին մինչև վերջինիս 18 տարին լրանալը: Սույն կետով թվարկված բոլոր շահառուների բացակայության դեպքում շահառու են համարվում նաև անհայտ կորած անձի եղբայրը և քույրը, եթե տվյալ անձի մասով նախկինում որևէ այլ շահառու գումար չի ստացել»:

Փաստացի, այն դեպքերում, երբ մարտական գործողությունների հետևանքով անհայտ կորած զինծառայողը մինչ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելը բնակվել է միակ ծնողի և/կամ այլ հարազատի (տատիկ/պապիկ կամ այլ հարազատ) հետ և զինվորական ծառայության ընթացքում զինծառայողի միակ ծնողը մահացել է, զինծառայողի այլ հարազատ/ները չեն կարող հանդիսանալ շահառու, քանի որ դատական կարգով չի հաստատվել խնամակալություն մինչև զինծառայողի 18 տարին լրանալը:

Ստացվում է, որ սույն Նախագծով սահմանված կարգով մարտական գործողությունների հետևանքով անհայտ կորած զինծառայողին փաստացի խնամող կամ նրա խնամքի տակ գտնվող հարազատ/ները չեն կարող հանդիսանալ շահառու:

Այդ պատճառով անհրաժեշտ է շահառուների թվում ներառել նաև այն հարազատ(ներ)ին (օրինակ՝ տատիկ, պապիկ և/կամ այլ մոտ ազգականներ), ովքեր բնակվել են զինծառայողի հետ մինչև նրա զինվորական ծառայության զորակոչվելը կամ մարտական գործողություններին մասնակցելը, կամ ովքեր փաստացի խնամել են զինծառայողին այդ ժամանակահատվածում: Նույն սկզբունքը կիրառելի է նաև



այն դեպքերում, երբ տվյալ անձը գտնվել է զինծառայողի խնամքի տակ մինչև վերջինիս զինվորական ծառայության զորակոչվելը կամ մարտական գործողություններին մասնակցելը և, ըստ էության, մինչև նրա անհայտ կորչելը՝ մարտական գործողությունների արդյունքում: Սույն դրույթը վերաբերելի է բոլոր կազմերի զինվորական ծառայողներին:

Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանվում է «ընտանիքի անդամներ՝ ամուսին (կին), զավակ, ծնող, պապ, տատ, թոռ, եղբայր, քույր, որդեգրող, որդեգրված, խնամակալ, հոգաբարձու, խնամարկյալ, հոգաբարձության ներքո գտնվող անձ (բացառությամբ սույն օրենքի 7-րդ հոդվածում նշված դեպքերի):

Վերոնշյալ տրամաբանությունից ելնելով՝ Կազմակերպությունը գտնում է, որ «ընտանիքի անդամ» սահմանումը ևս անհրաժեշտ է ընդլայնել՝ ներառելով այն ազգականներին, ովքեր փաստացի բնակվել են անհայտ կորած անձի հետ և ունեցել սերտ հարաբերություններ:

2. ԱՆՅԱՅՏ ԿՈՐԱԾ ԱՆՁԱՆՑ և ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

Նախագծի 4-րդ հոդվածով սահմանվում է, որ անհայտ կորած անձը ձեռք է բերում անհայտ բացակայողի կարգավիճակ օրենքով սահմանված կարգով՝ անհայտ բացակայող ճանաչվելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու ուժով: «Անհայտ բացակայող» կարգավիճակը սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, որով նախատեսվում է, որ «շահագրգիռ անձանց դիմումով դատարանը կարող է քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչել, եթե մեկ տարվա ընթացքում նրա բնակության վայրում տեղեկություններ չկան նրա գտնվելու վայրի մասին»:

Չնայած նրան, որ Կազմակերպությունը չի կիսում այս մոտեցումը և գտնում է, որ «անհայտ կորած» և «անհայտ բացակայող» կարգավիճակները պետք է գործեն տարբերակված և ինքնուրույն, և որ օրենսդիրը չպետք է պարտադրի անհայտ կորած անձի հարազատներին դատարան դիմել՝ քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելու նպատակով, այնուամենայնիվ, Կազմակերպությունը դրական է գնահատում այն հանգամանքը, որ Նախագծով ամրագրվել է, որ անհայտ կորած անձին օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող ճանաչելը չի ազդում սույն օրենքով անհայտ կորած անձի և նրա ընտանիքի անդամների համար նախատեսված իրավունքների ծավալի վրա:

Սա կարևոր դրույթ է, որը նպատակ ունի երաշխավորել անհայտ կորած անձի և նրա ընտանիքի իրավունքների պաշտպանությունը, ինչպես նաև ապահովել նրանց



հասանելիությունը սոցիալական, իրավական և այլ տեսակի անհրաժեշտ աջակցությանը:

Նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «անհայտ կորած անձի իրավունքներն ու շահերը ենթակա են պաշտպանության՝ մինչև սույն օրենքով նախատեսված կարգով նրա հետախուզման դադարեցման պահը կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան նրան մահացած ճանաչելու վերաբերյալ վճռի օրինական ուժի մեջ մտնելը»:

Անհայտ կորածների իրավունքների պաշտպանությունը պետք է շարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ նրանց կարգավիճակը պաշտոնապես չի փոխվել:

«Անհայտ կորածների մասին» ԱՊՀ մոդուլային օրենքը նախատեսում է, որ «անհայտ կորածների իրավունքներն ու շահերը, ներառյալ նրանց քաղաքացիական կարգավիճակը, գույքը և ունեցվածքը, պետք է մշտապես պաշտպանված լինեն, մինչև նրանց ճակատագրի որոշումը կամ մահվան փաստի ճանաչումը»:

ԿԽՄԿ-ի կողմից մշակված անհայտ կորած անձանց մասին սկզբունքները և մոդուլային օրենքը նախատեսում է, որ անհայտ կորած անձանց իրավունքներն ու շահերը պետք է պաշտպանված լինեն ցանկացած ժամանակ, քանի դեռ չի պարզվել նրանց ճակատագիրը կամ ճանաչվել նրանց մահվան փաստը: Անհայտ կորած անձը պետք է ողջ համարվի, քանի դեռ նրա ճակատագիրը չի պարզվել: Անհայտ կորածի հիմնական իրավունքը հետախուզման և վերադառնալու իրավունքն է⁶:

Հաշվի առնելով վերոգրյալը, անհրաժեշտ է Նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մասից հանել **«մինչև սույն օրենքով նախատեսված կարգով նրա հետախուզման դադարեցման պահը կամ»** բառակապակցությունը:

Նախագծի 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհայտ կորած անձի ընտանիքի անդամներն իրենց նախաձեռնությամբ և լիազոր մարմնի համաձայնությամբ, կարող են ներգրավվել լիազոր մարմնին անհայտ կորած անձանց հետախուզման գործընթացում օգնություն և աջակցություն ցուցաբերելու նպատակով: Նշված անձինք նաև կարող են համապատասխան մարմիններից ստանալ տեղեկատվություն՝ անհայտ կորած անձի, այն երթուղու ու տարածքի վերաբերյալ, որտեղ անհրաժեշտ և նպատակահարմար է անցկացնել հետախուզումը, այլ տեղեկատվություն, որը կարող է նպաստել անհայտ կորած անձի արդյունավետ

⁶ Տե՛ս International Committee of the Red Cross. 2009. Guiding Principles / Model Law on the Missing: Principles for Legislating the Situation of Persons Missing as a Result of Armed Conflict or Internal Violence (<https://www.icrc.org/en/download/file/1066/model-law-missing-icrc-eng-.pdf>), Էջ 16.



հետախուզմանը՝ բացի քննչական գործողությունների կամ օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալներից:

Կազմակերպությունը գտնում է, որ քննչական կամ օպերատիվ-հետախուզական արդյունքում ստացված տվյալները որպես սահմանափակում նախատեսելը չափազանց ընդհանրական է և ոչ համաչափ: Իրավական այս լուծումը կարող է խոչընդոտել տվյալների տրամադրման գործընթացներին և ստեղծել անորոշություն իրավական դաշտում: Այդ անորոշությունը կարող է հանգեցնել ոչ համաչափ սահմանափակումների, որոնք չեն երաշխավորում անձանց իրավունքների պատշաճ պաշտպանություն:

Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1488 որոշման մեջ իրավական դիրքորոշումներ է հայտնել իրավական որոշակիության և համաչափության սահմանադրական սկզբունքների համակարգային կապի վերաբերյալ: Իր այդ որոշման մեջ Սահմանադրական դատարանը, մասնավորապես, օրենսդրական ձևակերպման անհստակությունը գնահատել է որպես կոնկրետ հիմնական իրավունքի սահմանափակման համաչափությունը երաշխավորելու համար պատշաճ նախադրյալների բազակայությունը: Մեկ այլ որոշման մեջ (ՍԴՈ-917) Սահմանադրական դատարանը լայն օրենսդրական սահմանափակումը՝ առարկայական չափանիշներով բավարար չափով հիմնավորված չլինելու պատճառաբանությամբ, գնահատել է որպես ոչ համաչափ:

Բացի այդ, հնարավոր են իրավիճակներ, երբ քննչական գործողությունների արդյունքում ձեռք բերված տվյալները կարող են էականորեն նպաստել որոնողական աշխատանքների արդյունավետությանը: Եթե առկա են վտանգներ պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների պաշտպանման մասով, ապա դրանց տրամադրման դեպքում պետք է կիրառվեն հատուկ ընթացակարգեր՝ ապահովելու համար անհրաժեշտ անվտանգության մակարդակը: Սակայն, անհայտ կորած անձանց ընտանիքները պետք է հասանելիություն ունենան այն տեղեկություններին, որոնք կարող են էականորեն նպաստել որոնողական աշխատանքների ընթացքին, անկախ տվյալների ձեռքբերման աղբյուրից: Նման տեղեկությունների տրամադրումը կարող է ունենալ կենսական նշանակություն անհայտ կորած անձի հայտնաբերման համար:

Այս համատեքստում, Կազմակերպությունը գտնում է, որ «բացի քննչական գործողությունների կամ օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալներից ձևակերպումը» բավարար չափով որոշակիացված և հիմնավորված չէ:



Նախագծի 7-րդ հոդվածը սահմանում է այն պայմանները, որոնց հիման վրա դատական կարգով անհայտ բացակայող ճանաչված զինծառայողի կամ կամավորականի ընտանիքին տրամադրվում են համապատասխան արտոնություններ: Մինևույն ժամանակ, հոդվածում սահմանվում է նաև «անհայտ կորած անձի ընտանիքի անդամների» նոր շրջանակը, որի մեջ ընդգրկվում են ամուսինը, զավակները և ծնողները:

Հոդվածի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Նախագիծը մի կողմից նպատակ ունի ապահովել իրավական մեխանիզմներ՝ ընտանիքի անդամների սոցիալական պաշտպանության համար, պայմանով, որ վերջիններս բավարարում են օրենսդրությամբ սահմանված որոշակի չափանիշների (օրինակ՝ եթե անձը անհայտ կորել է ծառայողական պարտականությունները կատարելիս կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ): Մյուս կողմից, Նախագիծը հստակեցնում է այն շահառուների շրջանակը, ովքեր իրավասու են ստանալու վնասի հատուցում և սոցիալական աջակցություն:

Նման կարգավորումները, իրենց բովանդակությամբ, առաջացնում են մի շարք հիմնավոր հարցեր և մտահոգություններ: Հատկապես անհասկանալի է, թե ինչու ընտանիքի միայն մի մասը կարող է օգտվել օրենքով նախատեսված արտոնություններից կամ սոցիալական աջակցությունից, մինչդեռ ընտանիքի այն անդամները, որոնք, հնարավոր է, ունեցել են նույն, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ առավել սերտ փոխկապակցվածություն անհայտ կորած անձի հետ, դուրս են մնում շահառուների շրջանակից:

Բացի այդ, առկա է անհամապատասխանություն նաև այն դեպքերում, երբ որոշ անձինք, որոնք ըստ Նախագծի արդեն ճանաչվել են որպես ընտանիքի անդամներ, կոնկրետ իրավիճակներում չեն դիտարկվում որպես այդպիսին և, հետևաբար, զրկվում են արտոնությունից: Այս հակասությունը հանգեցնում է ոչ միայն իրավական անորոշության, այլ նաև հնարավոր սոցիալական անարդարության, ինչը վտանգում է աջակցության համակարգի վստահելիությունը և արդյունավետությունը:

Այս պայմաններում անհրաժեշտ է վերանայել «ընտանիքի անդամ» և «շահառու» սահմանումները՝ ելնելով վերոնշյալ դիտարկումներից: Պետք է ապահովել ավելի լայն, համարժեք և գործնական մոտեցում, որը հիմնված կլինի ոչ միայն ձևական իրավական կապերի, այլև իրական, փաստացի ընտանեկան հարաբերությունների փաստերի վրա:



Մինևույն ժամանակ, անհայտ կորած անձանց և նրանց ընտանիքների համար նախատեսված արտոնությունների ու աջակցությունների տրամադրման հիմքում պետք է դրվի **Նախագծով սահմանված «անհայտ կորած անձի» հասկացությունը՝** բացառելով լրացուցիչ նախապայմանների պահանջը:

3. ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾ ԱՆՁԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԱՁԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ.

Իր 77/220 բանաձևում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեան կոչ է արել պետություններին ձեռնարկել համապատասխան միջոցներ անհայտ կորածների իրավական կարգավիճակի, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամների անհատական կարիքների և նրանց աջակցության տրամադրման վերաբերյալ՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանանց, երեխաների և տարեցների կարիքներին այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են սոցիալական ապահովությունը, հոգեբանական և հոգեսոցիալական աջակցությունը, ֆինանսական հարցերը, ընտանեկան իրավունքը և սեփականության իրավունքը⁷:

Անհայտ կորած անձանց ընտանիքներն ունեն կարիքների լայն շրջանակ, ներառյալ տեղի ունեցած իրադարձությունների մասին տեղեկացված լինելու անհրաժեշտությունը, աճյունները հայտնաբերելու և հանգուցյալներին հիշելու անհրաժեշտությունը, տնտեսական, ֆինանսական, հոգեբանական և հոգեսոցիալական աջակցության կարիքը, անվտանգության սպառնալիքներից պաշտպանվելու անհրաժեշտությունը և արդարադատության և արդյունավետ իրավական պաշտպանության միջոցների հասանելիության ապահովման անհրաժեշտությունը⁸:

Անհայտ կորած անձանց ընտանիքների՝ արդյունավետ և որակյալ հոգեբանական աջակցություն ստանալու իրավունքը մարդու իրավունքների պաշտպանության և մարդասիրական օգնության տրամադրման անկյունաքարերից է: Մարդու իրավունքների հանձնակատարը կոչ է արել պետություններին անհայտ կորած անձանց հարազատներին տրամադրել անհրաժեշտ իրավական, հոգեբանական և սոցիալական աջակցություն⁹:

Առաջարկում ենք, Նախագծում ամրագրել անհայտ կորած անձանց ընտանիքների հոգեբանական աջակցություն ստանալու իրավունքը:

⁷ <https://docs.un.org/ru/A/RES/77/220>

⁸ St´ u Generalʹnaya Assambleya, *Proпavshie bez vesti liца*, A/71/299, 5 августа 2016, էջ 19:

⁹ Комиссар Совета Европы по правам человека, тематический доклад о пропавших без вести и жертвах насильственного исчезновения в Европе), <https://rm.coe.int/16806da748>, էջ 9:



**4. ԱՆՀԱՅՑ ԿՈՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ
Ե ԱՆՀԱՅՑ ԿՈՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՌԵՏՍՏՐԸ.**

Նախագծով սահմանված են անհայտ կորած անձանց հարցերով զբաղվող մարմինները՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ՀՀ ազգային տեղեկատվական կենտրոնը, ՀՀ պաշտպանության նախարարությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, ՀՀ քննչական կոմիտեն, ինչպես նաև ՀՀ գերիների, պատանդների և անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց հարցերով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողովը:

Նախագծի 9-րդ հոդվածի համաձայն՝ անհայտ կորած անձանց հարցերով լիազորված մարմինը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունն է, որին վերապահված է անհայտ կորած անձանց հետախուզման համակարգումը և դրա հետ կապված այլ հարցերի կարգավորումը:

Նախագծի 12-րդ հոդվածով սահմանված՝ Գերիների, պատանդների և անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց հարցերով հանձնաժողովը հասարակական հիմունքներով գործող խորհրդակցական մարմին է, որի գործունեության հիմնական խնդիրները՝ ի թիվս այլ սուբյեկտների՝ անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց որոնողական ու վերադարձման աշխատանքներին իր իրավասության սահմաններում աջակցելն է և անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց ընտանիքների անդամների ու հարազատների, ինչպես նաև շահագրգիռ մարմինների և կազմակերպությունների հետ մշտական կապ պահպանելը:

Այսպիսով, ստացվում է, որ Նախագծի հեղինակներն առաջարկում են անհայտ կորած անձանց հարցերի լուծումը կամ դրանց շուրջ միջոցառումների իրականացումը վերապահել մի շարք մարմինների, որոնց լիազորությունները և գործառույթները հստակ սահմանված չեն, իսկ որոշ հարցերում անգամ տեղի է ունենում գործառույթների կրկնություն, ի թիվս այլ խնդիրների՝ բացակայում է նաև մեկ միասնական համակարգող մեխանիզմ, որը կհամապատասխաներ միջազգային չափորոշիչներին:

ԿԽՄԿ-ի անհայտ կորած անձանց որոնման ազգային մեխանիզմների վերաբերյալ ուղեցույցում նշվում է, որ անհայտ կորած անձանց որոնումը և նույնականացումը, նրանց ընտանիքների կարիքների բավարարումը բարդ գործընթացներ են, որոնք կարող են պահանջել գաղտնիություն, ինչպես նաև դատական, քննչական և դատաբժշկական մարմինների և այլ հաստատությունների ու շահագրգիռ կողմերի մասնակցություն ու փոխգործակցություն: Այս գործընթացներում կարող են ներգրավվել ինչպես ազգային, այնպես էլ միջազգային ոչ կառավարական



կառույցներ, որոնք ունեն հատուկ ռեսուրսներ և փորձ, որոնք կարող են օգտագործվել մեխանիզմի աշխատանքում: Վերոնշյալ նպատակներին հասնելու համար պետք է իրականացվի առկա կառույցների և գործընթացների ներուժի գնահատում ինչպե՛ս գործնական, այնպե՛ս էլ քաղաքական տեսանկյունից (ներառյալ դրանց վստահելիությունը և անկախությունը)¹⁰:

Ուսումնասիրելով միջազգային կառույցների կողմից մշակված ուղեցույցները, ձևավորված մոտեցումները, պետություններին ուղղված առաջարկությունները, ինչպես նաև այլ երկրների փորձը՝ Կազմակերպությունը նախագծով առաջարկվող անհայտ կորած անձանց և նրանց հարազատների իրավունքների ու օրինական շահերի ապահովմանն ուղղված մեխանիզմը գնահատում է ինտրահարույց, ոչ արդյունավետ և միջազգային չափորոշիչներին հակասող: Ստորև ներկայացվում են անհայտ կորած անձանց հարցերով զբաղվող ազգային մեխանիզմի ձևավորման և աշխատանքի հիմնական հայեցակարգային մոտեցումները՝ հաշվի առնելով միջազգային պրակտիկան:

ԿԻՄԿ-ի կողմից մշակված մոդուլային օրենքը նախատեսում է երկու մարմինների ստեղծում. առաջինը՝ անհայտ կորած անձանց հետախուզման իրավասու պետական մարմին, որը լիազորված է լինելու օրենքի համաձայն անհայտ կորած անձանց որոնման և այլ գործառույթներ իրականացնելու համար, և երկրորդը՝ ազգային տեղեկատվական բյուրո:

Մոդուլային օրենքը սահմանում է, որ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 60-օրյա ժամկետում ստեղծվում է անհայտ կորածների որոնողական աշխատանքների անկախ և անաչառ իրավասու պետական մարմին: Չնայած նրան, որ նշվում է, որ այն կարող է լինել գոյություն ունեցող մարմնի ստորաբաժանում կամ հատուկ ստեղծված հաստատություն, որոշ երկրներ ունեն փորձ՝ ստեղծելու մասնագիտացված անկախ մարմիններ կամ հանձնաժողովներ, որոնք զբաղվում են անհայտ կորած անձանց հարցերով:

Մասնավորապես, անհայտ կորածների որոնումների գործընթացը բարելավելու և անհայտ կորածների աճյունների նույնականացումն արագացնելու նպատակով Բոսնիա և Հերցեգովինայի անհայտ կորածների ինստիտուտը (Missing Persons Institute) ստեղծվել է որպես Բոսնիա և Հերցեգովինայում անհայտ կորածների որոնման անկախ հաստատություն¹¹:

¹⁰ Տե՛ս National Mechanisms for Missing Persons: A toolbox (<https://shop.icrc.org/national-mechanisms-for-missing-persons-a-toolbox-pdf-en.html>), էջ 17-18:

¹¹ Law on missing persons, article 9, <https://advokat-prnjavorac.com/legislation/Law-on-missings-persons.pdf>:



Մարդու իրավունքների խորհրդի խորհրդատվական կոմիտեի՝ անհայտ կորածների վերաբերյալ լավագույն փորձի վերաբերյալ զեկույցում նշվում է, որ անկախ և անաչառ ազգային մարմինը կարող է առանցքային դեր խաղալ անհայտ կորածների ճակատագրի պարզաբանման գործում: Պետությունները պետք է ապահովեն նման հաստատության (անհայտ կորածների կոմիտեի կամ հանձնաժողովի) ստեղծումը և գործառնական գործունեությունը համապատասխան կառույցների միջոցով, ինչպիսիք են աշխատանքային խմբերը կամ համապատասխան մեխանիզմները:

Անհայտ կորածների հարցերով հանձնաժողովը կամ կոմիտեն պետք է ունենա հստակ սահմանված լիազորություններ, որոնք կենտրոնացած են զինված հակամարտության հետևանքով անհայտ կորածներին գտնելու վրա, և պետք է ունենա հստակ սահմանված մարդասիրական և օրենսդրական մանդատ, որն ուղղված է զինված հակամարտությունների հետևանքով անհայտ կորածների որոնմանը: Այն պետք է ունենա իր մանդատն իրականացնելու համար անհրաժեշտ ռեսուրսներն ու լիազորությունները¹²:

Անհրաժեշտ է, որ այդ ինստիտուտները հնարավորինս ապաքաղաքականացվեն, իրենց աշխատանքը կատարեն բաց և թափանցիկ ձևով, ու իրենց կազմում ընդգրկեն ոչ միայն պետական պաշտոնյաներին, այլ նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին, ինչպես նաև անհայտ կորածների հարազատներին, որպեսզի ապահովվի դրանց անկախությունը և արդյունավետությունը:¹³

Առանձին մարմինների կամ հանձնաժողովների ստեղծումը հաճախ պայմանավորված է լինում գործող պետական հաստատությունների նկատմամբ վստահության ցածր մակարդակով, ինչպես նաև տվյալ հաստատություններում տեղի ունեցող մարդու իրավունքների խախտումներով: Հանրային վստահության գործոնը եական նշանակություն ունի ապահովելու համար անհայտ կորածների ընտանիքների մասնակցությունն անհայտ կորած անձանց հարցերով զբաղվող կառույցների աշխատանքներում:

Միջազգային հարթակներում մշտապես ընդգծվել է անհայտ կորածների ընտանիքների արդյունավետ մասնակցության ապահովման խնդիրը՝ ինչպե՛ս մեխանիզմի/կառույցի ստեղծման գործընթացին, այնպե՛ս էլ դրա գործունեության ընթացքում:

¹² A/HRC/16/70, par. 37

¹³ Տե՛ս նույն տեղում, պարբ. 43



Անհայտ կորածների ընտանիքների ներգրավումը կարևոր դեր ունի անհայտ կորածների ցուցակը կազմելու և այլ տեղեկություններ հավաքագրելու գործում, ինչպիսիք են անհետացման հանգամանքները կամ հնարավոր հուղարկավորման վայրը:¹⁴:

Հետևաբար, ձևավորվող կառույցը կամ մեխանիզմը պետք է ունենա այն ընտանիքների և համայնքների վստահությունը, որոնց համար այն ստեղծվել կամ գործում է: Ընթացիկ կամ հետկոնֆլիկտային իրավիճակներում և բռնության այլ դեպքերի պայմաններում մեխանիզմը կարող է պահանջել ավելի անկախ լինել այլ պետական կառույցներից՝ արդյունավետությունը ապահովելու համար:

Եւս մարդու իրավունքների հանձակատարի զեկույցում նշվում է, որ թեև անհայտ կորածների որոնումը համակարգող ազգային հանձնաժողովների կամ կենտրոնացված հաստատությունների ստեղծումը դրական քայլ է, փորձը ցույց է տալիս, որ նման մեխանիզմներն ապահովված չեն բավարար մարդկային և ֆինանսական ռեսուրսներով: Եվ եթե դրանք չգործեն լիակատար թափանցիկությամբ և անկախությամբ, ինչպես նաև չհամագործակցեն դատական փորձագետների, ՀԿ-ների և անհայտ կորածների հարազատների ասոցիացիաների հետ, ապա դրանք դատապարտված են ձախողման¹⁵:

ՄԻԵԴ-ը «Այլախանդակ և այլք ընդդեմ Ռուսաստանի Դաշնության» գործով (2012, պարագրաֆ 225) ընդգծել է, որ անհրաժեշտ է ստեղծել «տարածաշրջանում անհետացումները հետաքննող միասնական, բարձրաստիճան մարմին, որին կտրամադրվի անսահմանափակ հասանելիություն բոլոր անհրաժեշտ տեղեկատվություններին, և որի աշխատանքը կկառուցվի անհայտ կորածների հարազատների հետ վստահության և գործընկերության հիման վրա»¹⁶:

Անհայտ կորած անձանց որոնումը, նույնականացումը, նրանց ընտանիքների կարիքների բավարարումը և իրավական կարգավիճակի որոշումը պահանջում են համապարփակ մոտեցում, որը ներառում է մի քանի ոլորտների համագործակցություն՝ իրավապահ համակարգ, գինված ուժեր, դատաբժշկական փորձագետներ, հասարակական և միջազգային կառույցներ:

Բացի այդ, ՀՀ գործող մարմինների պարագայում շատ վիճելի է որևէ կառույցին վերապահել անհայտ կորած անձանց որոնման իրավասու պետական մարմին

¹⁴ National Mechanisms for Missing Persons: A toolbox, էջ 58-59.

¹⁵ St' u Council of Europe: Commissioner for Human Rights, Missing persons and victims of enforced disappearance in Europe, March 2016, էջ 43-44:

¹⁶ St' u նույն տեղում, էջ 44:



լիազորությունները, քանի որ այս գործընթացը, ինչպես արդեն նշվեց, պահանջում է բազմամասնագիտական մոտեցում և համապարփակ կառավարման մեխանիզմ, որը կաշկանդված չի լինի իրականացնել այլ մարմինների նկատմամբ վերահսկողություն և կունենա բավար մակարդակի անկախություն և հանրային վստահություն:

Մինչ որևէ մարմին անհայտ կորած անձանց հարցերով լիազորությունների վերապահումը, անհրաժեշտ է պարզել՝ արդյոք ՀՀ գործող մարմիններն ունակ են ապահովելու անհայտ կորած անձանց հարցերով զբաղվող մեխանիզմի արդյունավետ և համակարգված աշխատանքը, ունեն բավարար չափի անկախություն իրականացնելու ուսումնասիրություններ և քննություններ, ունեն բավարար չափի հանրային վստահություն՝ անհայտ կորած անձանց հարազատների հետ արդյունավետ աշխատելու համար, բավարար կարողություններ՝ աշխատելու միջազգային և այլ շահագրգիռ կառույցների հետ:

Սրանք հարցեր են, որոնք պահանջում են խորը վերլուծություն և գնահատում:

Հաշվի առնելով պետության նախկին փորձը, երբ մարմինները և գերատեսչությունները, չկարողանալով ճիշտ ու արդյունավետ համագործակցել, չունենալով հստակ օրենսդրորեն ամրագրված մանդատ, ինչպես նաև ռեսուրսներ, բախվել են գործողությունների կրկնօրինակման, կասեցման, դանդաղեցման և արդյունավետության ապահովման խնդրին, **Կազմակերպությունը բազասաբար է գնահատում Նախագծով առաջարկվող մեխանիզմը և գտնում է, որ անհրաժեշտ է ձևավորել մեկ միասնական անկախ մարմին՝ Անհայտ կորած անձանց հարցերով պետական կոմիտե, որը կհամակարգի բոլոր գործընթացները՝ ապահովելով արդյունավետ աշխատանք տարբեր մարմինների և կազմակերպությունների միջև, ինչպես առկա է մի շարք այլ երկներում:**

Անհայտ կորած անձանց հարցերով պետական կոմիտեն (Կոմիտե) պետք է գործի անհայտ կորած անձանց և նրանց հարազատների իրավունքների պաշտպանության, անկախության, քաղաքական չեզոքության, անկողմակալության, ֆինանսական ինքնուրույնության, ֆունկցիոնալ անձեռնմխելիության, հանրային հաշվետվողականության և թափանցիկության, ինչպես նաև համագործակցության սկզբունքների հիման վրա:

Անհայտ կորած անձանց և գերիների հարցերով պետական կոմիտեն (Կոմիտե) պետք է ունենա օրենքով հստակ սահմանված և միջազգային չափանիշների համահունչ լիազորություններ, որոնք կապահովեն գործընթացների արդյունավետությունը, թափանցիկությունը և հաշվետվողականությունը:



Կոմիտեն պետք է լիազորված լինի ստանալու անհայտ կորած անձանց հետախուզման հարցումները, դրանց հիման վրա հավաքագրելու, ստուգելու և փոխանցելու անհայտ կորածների հարազատներին և իրավասու պետական մարմիններին անձի անհետացման վերաբերյալ առկա տեղեկությունները և փաստերը, ինչպես նաև տվյալներ անձի գտնվելու վայրի և ճակատագրի մասին:

Կոմիտեն պետք է ունենա իրավասություն նաև քննել անհայտ կորած անձանց անհետացման հետ կապված հանգամանքները: Միաժամանակ, Կոմիտեն պետք է համակարգի այլ մարմինների աշխատանքը՝ անհայտ կորածների որոնման, աճյունների նույնականացման և անհայտ կորած անձանց և նրանց հարազատների իրավունքների պաշտպանության հետ կապված բոլոր հարցերում: **Կոմիտեն նաև պարտավոր է ապահովել, որ ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ նախապատրաստական միջոցառումները Ազգային տեղեկատվական բյուրոյի ստեղծման և գործունեության համար, որը պատասխանատու կլինի տվյալների հավաքագրման և համակարգման գործընթացների համար՝ ապահովելով անհայտ կորած անձանց որոնման աշխատանքների շարունակականությունը:**

Կոմիտեն պետք է նաև ունենա իրավասություն ճանաչելու անհայտ կորած անձին և իրականացնելու նրա անհայտ կորած լինելու կարգավիճակի պաշտոնական ճանաչման գործընթացը՝ համաձայն սահմանված ընթացակարգերի:

Օրենսդրորեն պետք է ամրագրել, որ իրավասու մարմինները պարտավոր են տրամադրել Կոմիտեին բոլոր անհրաժեշտ տեղեկատվությունները, որոնք կապված են անհայտ կորած անձանց ճակատագրի և ինքնության որոշման հետ: Նման դեպքերում պետք է սահմանվեն նաև իրավական հետևանքներ՝ այս պարտավորությունը չկատարելու համար, որպեսզի ապահովվի տեղեկատվության պատշաճ տրամադրումը ու գործընթացի արդյունավետությունը: Բացի այդ, Կոմիտեն պետք է ունենա հասանելիություն պետական հիմնարկների արխիվներին և պետական գաղտնիք պարունակող տեղեկատվությանը, որն անհրաժեշտ է անհայտ կորած անձանց գտնվելու վայրի և ճակատագրի պարզաբանման համար՝ օրենքով սահմանված պայմաններում և կարգով:

Կոմիտեի անդամները պետք է ընտրվեն ՀՀ Ազգային ժողովի կողմից, քանի որ դա կարևոր պայման է նրանց անկախության ապահովման համար: Անդամները պետք է ունենան անձեռնմխելիություն, որպեսզի կարողանան կատարել իրենց գործառույթները առանց քաղաքական կամ այլ ճնշումների ազդեցության:



Կոմիտեի ենթակայության տակ պետք է ստեղծվի Ազգային տեղեկատվական կենտրոն (բյուրո), որը կլինի պատասխանատու անհայտ կորած անձանց վերաբերյալ տեղեկատվության հավաքման և համակարգման համար:

Անհայտ կորած անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային իրավական համակարգում առանցքային դեր է խաղում Ազգային տեղեկատվական կենտրոնը/բյուրոն:

Ժնևի 1949 թվականի կոնվենցիաներում սահմանվում է տեղեկատվական բյուրոյի ստեղծման անհրաժեշտության մասին, որը կենտրոնացված կերպով հավաքագրելու է տեղեկատվություն հակառակորդ կողմին պատկանող ռազմագերիների և քաղաքացիական անձանց մասին, այդ տեղեկությունները փոխանցելու է մյուս կողմին և սկսելու է հետաքննություն՝ պարզելու անհայտ կորածների ճակատագիրը և գտնվելու վայրը¹⁷: Ժնևի չորրորդ կոնվենցիայի 26-րդ հոդվածի համաձայն՝ հակամարտող կողմերը պարտավորվում են նպաստել անհայտ կորած հարազատների որոնմանը:

ԿԻՄԿ նշում է, որ Ազգային տեղեկատվական բյուրոն/կենտրոնը պետք է պատրաստ լինի գործելու, երբ ռազմական գործողությունները սկսվեն: Ուստի նպատակահարմար է դրա ստեղծման հիմքը դնել խաղաղ ժամանակ: Եթե այն դեռ չկա, իշխանությունները պետք է ապահովեն դրա ստեղծումը: Լիովին ընդունելով զինված հակամարտությունների ժամանակ Կենտրոնի դերը, այն կարող է նաև ստանալ լիազորություններ և գործել՝ ավելի ակտիվորեն աջակցելու անհայտ կորածների որոնմանն ու նրանց վերադարձին խաղաղության պայմաններում (...)¹⁸:

Նախագծով առաջառնվում նառամոռումնեոհ աառաաաում անհասկանալի է, թե ինչպես է ձևավորվելու **անհայտ կորած անձանց միասնական ռեեստրը:**

Գտնում ենք, որ Ռեեստրի կառուցվածքը և գործառույթները պետք է սահմանվեն օրենքով, այլ ոչ թե ենթաօրենսդրական ակտով: Բացի այդ, անհրաժեշտ է նշել՝ երբ կձևավորվի Ռեեստրը օրենքի ուժի մեջ մտնելուց հետո:

Նախագծով առաջարկվում է նաև ստեղծել գերիների, պատանդների և անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց հարցերով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողով, մինչդեռ նշված կառույցը չունի վերահսկողական լիազորություններ,

¹⁷ Ժնևի երրորդ կոնվենցիայի 122-րդ հոդված; Ժնևի չորրորդ կոնվենցիայի 136-րդ հոդված; 16-17-րդ հոդվածները Ժնևի առաջին կոնվենցիայի Ժնևի երկրորդ կոնվենցիայի 19-րդ հոդված:

¹⁸ International Committee of the Red Cross. 2009. Guiding Principles / Model Law on the Missing: Principles for Legislating the Situation of Persons Missing as a Result of Armed Conflict or Internal Violence



ինչը նշանակում է, որ այն, ունենալով միայն խորհրդատվական նշանակություն, կրելու է ֆորմալ բնույթ՝ առանց իրավիճակի վրա ազդեցություն ունենալու մանդատի:

Նմանատիպ մարմինների ստեղծումը, եթե դրանք չունեն արդյունավետ գործառույթներ, որոնք կարող են հանգեցնել իրական փոփոխությունների կամ ազդեցության, անօգուտ են և կորցնում են իրենց նշանակությունը: Երբ կառույցները չեն ապահովում իրական վերահսկողություն կամ լուծումներ, դրանք գոյություն ունեն միայն ֆորմալ՝ առանց որևէ դրական ազդեցություն թողնելու առաջացած խնդիրների վրա:

Այսպիսով, հաշվի առնելով ներկայացված դիտարկումները, անհրաժեշտ է վերանայել անհայտ կորածների հարցերով զբաղվող իրավասու մարմինների շրջանակը, դրանց գործառույթները և կազմավորման հիմքերը՝ ապահովելով դրանց առավել արդյունավետությունը և անկախությունը:

ԱՆՋԱՅՑ ԿՈՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՅԵՏԱԽՈՒԶՈՒՄԸ.

Նախագծի 16-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհայտ կորած անձի հետախուզման մասին դիմումի առկայության դեպքում Պաշտպանության նախարարությունը կամ այն պետական մարմինը, որի զինծառայող (աշխատակից) է հանդիսանում տվյալ անձը, անհայտ կորած զինծառայողների, ինչպես նաև զինվորական ծառայության մեջ չգտնվող այլ անհայտ կորած անձանց վերաբերյալ տեղեկատվությունը 72 ժամը լրանալուն հաջորդող 24 ժամվա ընթացքում ներկայացնում են Լիազոր մարմին:

Նշված մասը կարճի ունի հստակեցման, անհասկանալի է, թե որ դիմումի մասին է խոսքը, և ում կողմից է այն ներկայացվում: Գտնում ենք, որ պետք է խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «Եթե անհայտ կորած զինծառայողների, ինչպես նաև զինվորական ծառայության մեջ չգտնվող այլ անհայտ կորած անձանց ճակատագրի և գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է, ապա Պաշտպանության նախարարությունը կամ այն պետական մարմինը, որի զինծառայող (աշխատակից) է հանդիսանում տվյալ անձը, ներկայացնում է դիմում Լիազոր մարմին 72 ժամը լրանալուն հաջորդող 24 ժամվա ընթացքում»:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. «Անհայտ կորած անձ» հասկացությունը սահմանել հետևյալ բովանդակությամբ՝ զինծառայող, ինչպես նաև՝ զինվորական ծառայության մեջ չգտնվող այլ անձ, որն անհետացել է ռազմական գործողությունների հետևանքով ստեղծված պայմաններում և հանգամանքներում, այդ թվում՝ հակառակորդի



Նախահարձակ գործողությունների հետևանքով, կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու, կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ, կամ զինադադարի ընթացքում կամ ռազմական գործողություններին հաջորդող խաղաղ պայմաններում, և նրա գտնվելու վայրը և ճակատագիրը հայտնի չէ ծառայության վայրում կամ նրա ազգականներին` անհետացման պահից 72 ժամ անց:

2. Հստակ սահմանել, որ անձը ձեռք է բերում անհայտ կորածի կարգավիճակ, եթե վերջինիս ճակատագրի և գտնվելու վայրի մասին տեղեկություններ չկան 72 ժամ անց:
3. Շահառուների թվում ներառել նաև այն հարազատ(ներ)ին (օրինակ` տատիկ, պապիկ և/կամ այլ մոտ ազգականներ), ովքեր բնակվել են զինծառայողի հետ մինչև նրա զինվորական ծառայության զորակոչվելը կամ մարտական գործողություններին մասնակցելը, կամ ովքեր փաստացի խնամել են զինծառայողին այդ ժամանակահատվածում: Նույն սկզբունքը կիրառելի է նաև այն դեպքերում, երբ տվյալ անձը գտնվել է զինծառայողի խնամքի տակ մինչև վերջինիս զինվորական ծառայության զորակոչվելը կամ մարտական գործողություններին մասնակցելը և, ըստ եության, մինչև նրա անհայտ կորչելը` մարտական գործողությունների արդյունքում: Սույն դրույթը վերաբերելի է բոլոր կազմերի զինվորական ծառայողներին:
4. «Ընտանիքի անդամ» սահմանումը ևս անհրաժեշտ է ընդլայնել` ներառելով այն ազգականներին, ովքեր փաստացի բնակվել են անհայտ կորած անձի հետ և ունեցել սերտ հարաբերություններ: Պետք է ապահովել ավելի լայն, համարժեք և գործնական մոտեցում, որը հիմնված կլինի ոչ միայն ձևական իրավական կապերի, այլև իրական, փաստացի ընտանեկան հարաբերությունների փաստերի վրա:
5. Նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «մինչև սույն օրենքով նախատեսված կարգով նրա հետախուզման դադարեցման պահը կամ» բառակապակցությունը:
6. Անհայտ կորած անձանց և նրանց ընտանիքների համար նախատեսված արտոնությունների ու աջակցությունների տրամադրման հիմքում պետք է դրվի Նախագծով սահմանված «անհայտ կորած անձի» հասկացությունը` բացառելով լրացուցիչ նախապայմանների պահանջը:
7. Վերանայել «բացի քննչական գործողությունների կամ օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալներից» ձևակերպումը:



8. Նախագծում ամրագրել անհայտ կորած անձանց ընտանիքների հոգեբանական աջակցություն ստանալու իրավունքը:
9. Սահմանել Անհայտ կորած անձանց հաշվառման ու հետախուզման համար պատասխանատու մեկ մարմին:
10. ԱԱԾ-ն որպես Լիազոր մարմին սահմանելը՝ լուրջ խնդիրներ է առաջացնում և հակասում է միջազգային չափանիշներին: Յետևանար ինչպես ներկայացվել է, անհրաժեշտ է ձևավորել մեկ միասնական անկախ մարմին՝ Անհայտ կորած անձանց հարգերով պետական կոմիտե, որը կհամակարգի բոլոր գործընթացները, ապահովելով արդյունավետ աշխատանք տարբեր մարմինների և կազմակերպությունների միջև, ինչպես առկա է մի շարք այլ երկրներում:
11. Անհայտ կորած անձանց հարցերով պետական կոմիտեի ենթակայության տակ ձևավորել Ազգային տեղեկատվական կենտրոն (բյուրո), որը կլինի պատասխանատու անհայտ կորած անձանց վերաբերյալ տեղեկատվության հավաքման և համակարգման համար:
12. Սահմանել Ազգային տեղեկատվական կենտրոնի կառուցվածքը, գործառույթները, ձևավորման ժամանակացույցը օրենքով:
13. Նախագծից հանել միջգերատեսչական հանձնաժողովի վերաբերյալ կարգավորումները: Հանձնաժողովի ստեղծումը կհանգեցնի ռեսուրսների անարդյունավետ օգտագործման, քանի որ այն առաջացնում է աշխատանքային կրկնություն՝ տարբեր կառույցների կողմից նմանատիպ պարտականությունների կատարման արդյունքում: Բացի այդ, անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց ընտանիքների անդամների ու շահառուների, ինչպես նաև շահագրգիռ մարմինների և կազմակերպությունների հետ մշտական կապի պահպանումը հանդիսանում է Լիազոր մարմնի անմիջական պարտականությունը, քանի որ միայն այն կարող է ապահովել անհրաժեշտ տեղեկատվություն, ինչպես նաև արդյունավետ համակարգված հաղորդակցություն բոլոր կողմերի միջև:
14. Նախագծի 16-րդ հոդվածի 5-րդ մասը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «Եթե անհայտ կորած զինծառայողների, ինչպես նաև զինվորական ծառայության մեջ չգտնվող այլ անհայտ կորած անձանց ճակատագրի և գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է, ապա Պաշտպանության նախարարությունը կամ այն պետական մարմինը, որի զինծառայող (աշխատակից) է հանդիսանում տվյալ անձը, ներկայացնում է դիմում Լիազոր մարմին 72 ժամը լրանալուն հաջորդող 24 ժամվա ընթացքում»: